ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ *Հայոց լեզու և գրականություն*

Թեմա՝ *Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը հայոց լեզվի և գրականության դասերին՝ որպես սովորողների ներգրավվածությունը բարձրացնող միջոց*

Կազմեց՝ *Կարինե Նուրիջանյան*

Ղեկավար՝ *Լուսինե Գրիգորյան*

«Կապանի հ.2 ավագ դպրոց »ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանում)

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ---------- **3**

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ------ **5**

ԳԼՈՒԽ 2. ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ և ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ---------- **7**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ---------- 14

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդները:Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը,որը կարող է բարելավել կյանքը»:

Բ.Ֆ.Սքիներ

Այսօր պետությունների համագործակցության արդիական հիմնահարցերից մեկը կրթական համակարգի վերակառուցումն է՝ հասարակության զարգացման ժամանակակից պահանջներին համապատասխան: Ուսուցման նպատակը, կախված հասարակության սոցիալ-տնտեսական պայմաններից ու օրեցօր աճող պահանջներից, անընդհատ փոփոխվում է: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է պատրաստ լինի ժամանակի մարտահրավերներին, զինված լինի ոչ միայն իր պարապած առարկայի գիտելիքների խոր և բազմակողմանի իմացությամբ, այլև կարողանա այն մատուցել այնպիսի հնարամտությամբ և վարպետությամբ, որ բավարարի սովորողների և՛ հետաքրքրությունները, և՛ իմացության մակարդակը: Այսօր արդեն ժամանակավրեպ է միայն ուսուցման ավանդական մեթոդներով առաջնորդվելը, քանի որ աշակերտը տեղեկատվություն, գիտելիք ստանում է տարբեր աղբյուրներից՝ հեռուստատեսություն, համակարգիչ, բջջային հեռախոսներ, որոնք արմատական փոփոխություններ են պահանջում ուսուցման ողջ գործընթացում:Կրթությունը պահանջում է էական բարեփոխումներ՝ յուրաքանչյուր աշակերտի լիարժեք ներգրավում ուսման բոլոր գործընթացներում, յուրաքանչյուր սովորողի ազատ,կայուն և շարունակական զարգացման նպաստավոր պայմանների և հավասար հնարավորությունների ապահովում, սերունդներին ազգային մշակութային ժառանգության փոխանցում, արժանապատիվ քաղաքացու ձևավորում և զարգացում:

Մեր օրերում հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը, որ կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Առաջին պլան են մղվում ստացած գիտելիքներն իրական կյանքում կիրառելու, գիտելիքներն ինքնուրույն լրացնելու կարողությունները, հմտությունները, կատարողական որակները Այսօր կրթական համակարգն ունի առավել բարդ առաքելություն,այն է ձևավորել սերունդ,որն ունի ինքնուրույն, քննադատաբար մտածելու կարողություն ու հմտություն:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է՝

- բացահայտել ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման արդյունավետությունը նոր գիտելիքների յուրացման,ինչպես նաև գիտելիքների ամրապնդման և խորացման մեջ:
- ներկայացնել այնպիսի ռազմավարություններ, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորը ըմբռնելու,արժեհամակարգ ձևավորելու, ստեղծագործական և քննադատական մտածողություն զարգացնելու,ազատ հաղորդակցվելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու, մոտիվացիան խթանելու համար:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ,գործիք և ուսումնասիրության արդյունք»:

Լ.Վիգոտսկի

«Մեթոդը» հունարենից փոխառված բառ է և նշանակում է ինչ-որ նպատակի հասնելու, խնդիր լուծելու եղանակ, իսկ բառացի թարգմանությամբ՝ ինչ-որ տեղ տանող ճանապարհ: Մասնագիտական գրականության մեջ ընդունված և տարածված են մեթոդի հետևյալ սահմանումները[1]

- ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակ՝ ուղղված կրթական բովանդակության յուրացմանը
- ուսուցչի և սովորողի՝ ուսուցման նպատակներին ուղղված կարգավորված գործունեություն
- ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում ուսուցչի և աշակերտի գործունեության միջոց.
- ուսուցման գործընթացում ուսուցչի և սովորողի միջև փոխազդեցություն արտացոլող մոտեցումների և հնարների համախումբ

Մեթոդը բարդ և բազմակողմանի հասկացություն է.այդ են փաստում վերոբերյալ սահմանումները,որոնք, սակայն, ունեն մի ընդհանրություն.**մեթոդը ուսուցչի և աշակերտի համագործակցության ձև է՝միտված ուսումնական նպատակների իրականացմանը:** Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով. ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ, կամայական լինել. շատ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակահարմար ընտրությունը:

Այսօր ուսուցման մեթոդները բաժանվում են երկու խմբի ՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական են համարվում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության ՝ գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին,որի ընթացքում վերջինս հանդես է գալիս միայն վերարտադրողի դերում, ինչը քիչ է նպաստում աշակերտի ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացմանը, դասարանի ոչ բոլոր աշակերտներին է ներգրավվում դասընթացին: Ժամանակակից սովորողակենտրոն ուսուցման գործընթացը պահանջում է ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնց կիրառման արդյունքում

[1] 1 «Ուսումնական ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» Ք. Վանաձոր 2008թ., էջ 6

աշակերտը ուսուցանվող նյութը չի ստանում որպես պատրաստի ամբողջություն, այլ այդ թեմայի կամ խնդրի ամբողջացման գործում ունենում է իր անմիջական ներդրումը՝ որպես հետազոտող, ուսումնասիրող, համադրող և վերլուծող: Այս է պատճառը , որ ժամանակակից ուսուցման գործընթացում կարևորվում են ակտիվ ուսումնառության մեթոդները, որտեղ մեծ տեղ է կազմում աշակերտի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը, ինչպես նաև խթանում է հիմնովին ներգրավվածությունը դասապրոցեսին:Իհարկե,սա չի նշանակում,որ ավանդական ուսուցչակենտրոն մոտեցումներից պետք է իսպառ հրաժարվել:Ինչքան էլ ինտերակտիվ մեթոդները մոտիվացնեն աշակերտին ուսուցումը հետաքրքիր և մասնակցային դարձնելու համար,այնուամենայնիվ ավանդական մեթոդներից հարցուպատասխանը,նյութը վերհիշելը, վարժանքները,ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ:

Դասի արդյունավետությանը նպաստում են նաև մեթոդական հնարներն ու վարժությունները:Եթե **մեթոդը ճանապարհն է դեպի ուսումնական նպատակը,ապա հնարներն այդ ճանապարհին հանդիպած խնդիրները լուծելու, դժվարությունները հաղթահարելու միջոցներ են:** Դասի տարբեր փուլերում կիրառվում են տարբեր մեթոդներ:

- **Խթանման փուլում** հաճախ գործածվող մեթոդներից են՝ «Մտագրոհ», «Խմբավորում», «Պրիզմա», «Մտածիր, զույգ կազմիր, քննարկիր» և այլն:
- **Իմաստի ընկալման փուլում** կիրառվող մեթոդներից են՝ «Գաղափարների քարտեզ», «Վենի դիագրամ», «Բանավեճ», և այն:
- **Կշռադատման փուլում** հաճախ կիրառելի են «Քառաբաժան», «Խորանարդում», «Գնահատման անիվ»,«Հինգրոպեանոց շարադրանք», «Երեք բանալի և մեկ կողպեք», և այլ մեթոդներ:

Դիտարկումների ժամանակ դասարանում աշխատեցի և՛ ավանդական մեթոդներով, և՛ ակտիվ ուսումնառության մեթոդներով: Նպատակս էր պարզել՝ որ մեթոդներն են առավել արդյունավետ, որ մեթոդների միջոցով են ավելի շատ աշակերտներ ներգրավվում դասին,մեծ ակտիվություն և հետաքրքրություն ցուցաբերում: Հետազոտության ընթացքում դիտարկվեցին սովորողների գործունեությունը թե՛ անհատական աշխատանքների ժամանակ , թե՛ խմբում դերակատարում ունենալու,համագործակցելու տեսանկյունից, այսինքն, թե ինչքանով են կարողանում նրանք ինքնուրույն աշխատել դասանյութի հետ,ինչպես են կարողանում աշխատել խմբում,կարողանում են աշխատել զույգերով, ինչպիսի տրամաբանական կապեր են կարողանում ստեղծել ինքնուրույն , դասընկերոջ կամ ուսուցչի օգնությամբ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Կներկայացնեմ իմ պրակտիկայում հաճախակի կիրառված և իմ կարծիքով արդյունավետ որոշ մեթոդներ: Դասի խթանման փուլում հաճախ օգտագործում եմ **«Մտագրոհ»** մեթոդը: Այն արդյունավետ է այնքանով, որ յուրաքանչյուր աշակերտ ազատ է սեփական կարծիքն արտահայտելու համար: Արտահայտված բոլոր մտքերը կամ բառակապակցությունները գրառվում են գրատախտակին, որովհետև, որպես կանոն, «սխալ» կարծիք չկա: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը,այլ ոչ թե որակը:Պետք է խրախուսել շատ և բազմատեսակ մտքեր արտահայտելը՝առանց քննադատատական վերաբերմունքի:Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն իմ հարցին, որպեսզի ինձ համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները:

«10-րդ դասարանում Ոսկեդարի մատենագրություն» թեման անցնելուց առաջ սովորողներին հանձնարարել եմ լրացնել նախնական **հայտորոշիչ թեստ՝** պատկերացում կազմելու աշակերտների նախնական գիտելիքների մասին,ստուգելու սովորոսղների ընդհանրական ֆոնային գիտելիքները:Հարցերը ձևակերպել եմ կարճ,պարզ,մատչելի:Հաշվի առնելով թեստի արդյունքները՝ կարողանում եմ ճիշտ պլանավորել սովորողների հետագա ուսուցման և ուսումնառության գործընթացը:

Թեստին մասնակցել են 25 աշակերտ:Արդյունքները տրված են դիագրամի ձևով (տես **էջ 8)**


10-րդ դասարան
Հայտորոշիչ թեստ. հայոց այբուբեն
25
20
15
10
5
0
...անի՞ սն են հայ գրականության զարգացման շրջանները...
Հայոց այբուբենը ստեղծվել է...
Ո՞վ և ե՞րբ է ստեղծվել հայոց այբուբենը:
Ո՞րն է հայոց գրականության զարգացման 1-ին շրջանը:
Ո՞վ է գրել Մեսրոպ Մաշտոցի կյանքի մասին:
Ի՞նչ է մատենագրությունը:
Ո՞ր պետական այրերն են օժանդակել այբուբենի...
ճիշտ պատասխան
սխալ պատասխան

Խթանման փուլում կազմակերպել եմ **մտագրոհ** կամ **մտքերի տարափ Ոսկեդար** բառի շուրջ:Աշակերտները արտահայտում են մտքեր,հասկացություններ,որոնք առնչվում են այդ բառին: Փորձում եմ արտահայտած բոլոր մտքերը գրառել,քանի որ դա նպաստում է նոր մտքի առաջացմանը:Միտքը միտք է ծնում:Որպեսզի մեթոդը տա ցանկալի արդյունք,սահմանում եմ ընթացքի կանոններ:

• Առաջին հերթին պետք է ապահովել մասնակիցների միջև հավասարությունը:

• Պետք է բացառել ցանկացած քննադատություն՝ և՛ բացահայտ բացասական գնահատականը, և՛ քմծիծաղը, և՛ կողմնապահությունը:

• Պետք է խրախուսել շատ և բազմատեսակ գաղափարները:

Այս մեթոդն ունի առավելություններ և սահմանափակումներ:

Առավելություններ՝

- Խթանում է ստեղծագործական մտածողությանը:
- Միտքը միտք է ծնում:
- Առարկաների,գաղափարների ցանկը կազմվում է խմբովի:
- Պարզ մեթոդ է.հեշտ է հասկանալ և կիրառել:



Սահմանափակումներ `

- Մասնակիցների մեծ խմբի դեպքում ոչ բոլորն են հնարավորություն ունենում իրենց ցանկացած մտքերը արտահայտելու և մի քանի անգամ խոսելու:
- Մտագրոհը գործընթաց է,որը միշտ անավարտ է և ոչ ամբողջական:

Մտագրոհ կազմակերպելուց հետո սովորողներին հանձնարարում եմ սահմանել ` ինչու է 5-րդ դարը կոչվում Ոսկեդար՝օգտվելով թվարկված բառերից:

Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանել եմ 5 խմբի եւ հանձնարարել ընթերցել դասագրքի նյութը հատվածներով՝

Առաջին խումբ՝ Թարգմանչական գործ:

Երկրորդ խումբ ` Շարականագրություն:

Երրորդ խումբ՝ Սրբախոսություն:

Չորրորդ խումբ՝ Ճարտասանափիլիսոփայական գրականություն:

Հինգերորդ խումբ՝ Պատմագրություն:

Ահա դասագրքի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 18-26:

Հատվածները ընթերցելու ժամանակ սովորողներին հանձնարարել եմ կիրառել **«Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր»** վարժությունը, որն օգնում է մտածելու, կշռադատելու կարդացած նյութը,վերհիշելու նախորդ դասարանում այդ թեմայից անցածը եւ ընկերների օգնությամբ հստակեցնելու, ձեւակերպելու մտքերը:

Կշռադատման փուլում յուրաքանչյուր խումբ ներկայացրել է իր աշխատանքը:

Որպես ամփոփում՝ պահանջում եմ լրացնել հետևյալ աղյուսակը:

Ոսկեդարի մատենագրություն

Ճյուղերը	Ներկայացուցիչները	Գրական երկերը
Թարգմանություն		
Շարականագրություն		
Ճարտասանափիլիսոփայություն		
Սրբախոսություն		
Պատմագրություն		

Ապա կազմակերպում եմ անդրադարձ և հանձնարարում տնային աշխատանք:

Անդրադարձ

. Ի՞նչ թեմայի շուրջ խոսեցինք:

. Ի՞նչ նոր բան իմացաք:

. Ի՞նչը կարեւորեցիք եւ արժեւորեցիք:

Տնային աշխատանք:

. Գտնել եւ ներկայացնել `որ ստեղծագործությունների համար են աղբյուր դարձել պատմիչների երկերը:

. Գտնել եւ ներկայացնել արվեստի այն կտավները որոնցում ներկայացված են պատմիչների երկերից հատվածներ:

Հայոց լեզվի ժամերին որոշ թեմաներ ներկայացրել եմ թե ավանդական,թե ժամանակակից մեթոդներով: Աշակերտները ուշադրությամբ լսում էին, արձագանքում հարցերին, բայց դասարանում ակտիվ մթնոլորտ չէր նկատվում,իսկ երբ նույն թեմաները բացատրելիս փորձեցի մի քանի ժամանակակից մեթոդներ,ապա նկատեցի բարձր ակտիվություն և հետաքրքրություն դասանյութի հանդեպ: Ահա ,թե ինչ մեթոդներ եմ կիրառել հայոց լեզվի ժամերին:

«Ստորոգյալ» թեման անցնելիս կշռադատման փուլում կիրառել եմ **«փաստերի բուրգ»** մեթոդը,որը աշակերտներին օգնում է տեղեկատվությունը դասակարգել երեք մակարդակների:

Էական գիտելիքներ Ստորոգյալը նախ-ն գլխավոր անդամն է:

Կարճաժամկետ փաստեր Ստորոգյալը կարող է լինել պարզ և բաղադրյալ; Ստորոգելին արտահայտվում է տարբեր խոսքի մասերով:

Օժանդակ փաստեր Ստորոգյալը դեմքով և թվով համաձայնում էենթակային: Ստորոգյալը կարող է զեղչվել բարդ համադասական նախադասության մեջ:

«Ենթական» ամփոփելիս կիրառում եմ **Ֆրայերի մոդելը,**որը սովորողների համար ապահովում է համակարգված տեղեկատվություն տվյալ գաղափարի մասին:Այս մեթոդի առավելություններն են՝

- Սովորողները ելակետ ունենալով պարզ սահմանումներն ու գաղափարները՝ համալրում են դրանք առաավել խոր ու բարդ հասկացությունների մեջ:
- Սովորողները տարբերակում են հասկացության առանձնահատկությունները այն հատկանիշներից, որոնք զուգակցվում և զուգորդվում են դրան:
- Սովորողները ընդգրկվում են որոնողական գործընթացում՝ հանդիպելով շեղումների,բա,ցառությունների կամ սխալ օրինակների:

Էական բնութագիր Նախադասության գլխավոր անդամ է: Դրվում է ուղղական հոլովով:	**Ոչ էական բնութագիր** Կարող է ունենալ լրացումներ: Կարող է արտահայտվել գոյականաբար գոր-ծածված ցանկացած խոսքի մասով:
Օրինակներ Կաքավաբերդի գլխին տարին բոլոր *ամպ* է նստած: Բոլորը անհամբեր սպասում են հյուրի գալուն:	**Անհամապատասխան օրինակներ** Լինում են նաև անենթակա նախադասու-թյուններ: Լուսաբաց:Մթնեց:

ենթակա

Բացի վերոբերյալ բաժիններից հայոց լեզվի ժամերին հաճախակի եմ կիրառում նաև «Բառի տոհմածառ»,«Քարտեզագրում»,«Զուգադրության աղյուսակ»,ԳՈՒՍ, m-աձև,T-աձև աղյուսակ-ներ»,«Հնգյակ»,«Քառաբաժան»,իսկ գրականության ժամերին՝«Վենի դիագրամ», «Հեղինակի աթոռ»,« Պրիզմա»,«Խորանարդում»,«Երեք բանալի և 1 կողպեք»,«Կենաց ծառ»,«Բանավեճ» և այլ մեթոդներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ դասավանդման համար անհրաժեշտ է ոչ միայն դասավանդող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործման ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն: Ուսուցման ակտիվ մեթոդները,ի տարբերություն ավանդական մեթոդների, աշխուժացնում են դասապրոցեսը, հետաքրքրություն են առաջացնում ուսումնասիրվող նյութի նկատմամբ, նպաստում են ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացմանը,խթանում են աշակերտի ճանաչողական գործընթացը,ստեղծում են ինքնակրթության միջավայր, ձևավորում հաղորդակցական հմտություններ,ինչպես նաև ինքնակատարելագործման ձգտում:

Սակայն ինչքան էլ ժամանակակից մեթոդները ակտիվացնում են դասապրոցեսը, այնուամենայնիվ, դրանց կիրառումը ինքնանպատակ չպետք է լինի:Դրանք անհրաժեշտ, բայց բավարար պայման չեն դասի արդյունավետության ապահովման համար: Անհրաժեշտ է նախապես պլանավորել դասը, հաշվի առնել չափորոշչային պահանջները,նպատակն ու վերջնարդյունքը համեմատել, պետք է քննել կիրառվող մեթոդի ուժեղ և թույլ կողմերը,ճկունություն ցուցաբերել մեթոդի ընտրության հարցում,թույլ չտալ,որ խմբային աշխատանքների ժամանակ թույլ կարողություններով աշակերտները ստվերում մնան,պետք է տարբերակված առաջադրանքների միջոցով հնարավորություն տալ յուրաքանչյուր աշակերտի յուրովսանն արտահայտվելու:

Ուզում եմ հավելել նաև,որ ինչքան էլ ինտերակտիվ մեթոդները մոտիվացնեն աշակերտին ուսուցումը հետաքրքիր և մասնակցային դարձնելու համար,այնուամենայնիվ ավանդական մեթոդներից **հարցուպատասխանը,նյութը վերհիշելը, վարժանքները,ուսուցչի բացա-տրական խոսքը** ինձ համար այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ:

Այսպիսով,յուրաքանչյուրս պետք է անընդհատ ինքնակատարելագործվենք, հետևենք փոփոխություններին, գտնենք նոր մեթոդներ ու հնարներ, որպեսզի դպրոցն ավարտող ամեն մի աշակերտ ոչ միայն զինված լինի գիտելիքներով, այլև լինի մրցունակ ու կարողանա գիտելիքները կիրառի ստեղծագործաբար՝ ի նպաստ հայրենիքի բարգՕգտագործվաշ գրականություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ», ք.Վանաձոր (2008)

2 Խաչատրյան Ս., «Ուսուցման արդյունավետ հնարներ», Եր. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան (2020)

3Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա, Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Օհանովա Ի., «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», «Տիգրան Մեծ», Երևան(2004)

4.Վիրաբյան Ն.,Մարգարյան Լ., «Հետաքրքրաշարժ զրուցներ գրականությունից»,«Հայոց լեզվի ուսուցման մի քանի մեթոդներ»,Երևան , (2009)

Հավելվածներ

Հավելված 1

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ

ԱՌԱՐԿԱՆ՝ հայոց լեզու

ԴԱՍԱՐԱՆԸ՝ XI տնտեսագիտական հոսք

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ **«Բայ» խոսքի մասը**

ԴԱՍԻ ՏԻՊԸ ՝ Ամփոփման դաս

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՝ 45 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- ✓ Խորացնել և ընդլայնել բայի վերաբերյալ աշակերտների նախկին գիտելիքները:
- ✓ Զարգացնել սովորողների ճանաչողական, հաղորդակցական հմտությունները և կարողությունները:

ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ Սովորողը

- ✓ կճանաչի և կկիրառի բայը նախադասության մեջ.
- ✓ կբնութագրի բայի քերականական հատկանիշները և շարահյուսական դերը.
- ✓ կտարբերակի անդեմ և դիմավոր բայերը .
- ✓ կվերլուծի բայը ձևաբանորեն:

ԽԱՉՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- ✓ Օրինաչափություն
- ✓ Կառուցվածք և գործառույթ
- ✓ Համակարգ և մոդել

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ-հայ գրականություն,կերպարվեստ,աշխարհագրություն

<u>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ</u>- համակարգիչ, կպչուն թերթիկներ, մարկերներ և այլն:

<u>ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ</u>- **ԽԻԿ համակարգ, ճանաչողական վարժություններ, անավարտ նախադասություններ,ակրոստիքոս, 5 րոպեանոց շարադրանք, Գիտելիքների ծով,Կանոնների ծովախորշ:**

<u>ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ: ԽԹԱՆՈՒՄ՝</u>

Ա.Դասարանը նախօրոք բաժանել խմբերի՝աշակերտներին տալով մեկական նախադասություններ, որտեղ կարմիր գույնով նշված է որևէ բայեղանակ:Նրանք պետք է գուշակեն,թե ինչ եղանակով է դրված բայը իրենց նախադասություններում և նստեն համապատասխան անվան խմբի սեղանին:

Բ.Մատենադարանի նկարով սկսել դասը, որին հաջորդելու է մեծն Աբովյանի պատգամը. **<<Մի ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը>>:**

Գ.<<Ո՞րն է մեր դասի թեման>> հարցին պատասխանել՝ կազմելով **հնչյունակապ(ակրոստիքոս)** ԲԱՅ բառով և արտահայտել գծակարգով::**Օրինակ՝**

Բ անալին եմ ես խոսքի,

Ա ռանց ինձ շարժը կանգ կառնի,

Յ ոթ կարգ ունեմ անվանի

:



ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

ՔԱՅԼ 1. Հարցերի միջոցով ներկայացնել բայի ցուցադրված գծակարգը:

ՔԱՅԼ 2. Հեքիաթ Մայրենի լեզվի թագավորության մասին:

ՔԱՅԼ 3 .Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է Բայի որդիների ընտանիքները : (Զև,Դեմք.Թիվ,Սեռ,Եղանակ):

ՔԱՅԼ 4.Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր անվանը համապատասխան եղանակը և նրա դերը խոսքի մեջ:

ՔԱՅԼ 5. Գտնել սխալը և ուղղել: Յուրաքանչյուր խմբի հանձնարարել 4 բառ:

Խումբ 1	**Խումբ 2**	**Խումբ 3**	**Խումբ 4**	**Խումբ 5**
Խոնավեցնել	Թռչած	Մի՛ լսի	Բարձրացրեցի	Պետք չէ կարդամ
Նստացնել	Գալում եմ	Մի՛ք խոսեք	Վերջացրեցի	Պիտի չգրեմ
Խմացնել	Դիպչել եմ	Մի՛ գրեցեք	Խոսցրի	Քնած չի
Արածացնել	Խոսացող չի	Չ՛ծխել	Խմացրի	Շուռ տու՛ր

ՔԱՅԼ 6.Բառապաշարի հարստացում: Յուրաքանչյուր խումբ իրեն հանձնարարված նախադասությունների միջոցով պետք է որոշի նորածանոթ բառի իմաստը:

ՔԱՅԼ 7. Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է կազմել կապակցված խոսք:

1-ին խումբ- ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

«Ականատեսի» լեզվով ներկայացնել Մաշտոցի գյուտը՝ նշելով բայի բաղադրյալ դիմավոր ձևերը:

2-րդ խումբ- ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ.

«Երանի»բառի ուղեկցությամբ տեղափոխվել երազների գիրկը՝ նշելով բայի պարզ դիմավոր ձևերը:

3-րդ խումբ- ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ.

Ներկայացնել չար, նախանձ , բայց արդեն ապաշխարող մարդու երազանքը՝ նշելով բայի սեռը:

4-րդ խումբ - ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ.

նախադասությամբ պատժել կարգազանց քաղաքացուն՝ նշելով անդեմ կամ անկանոն բայերը:

5-րդ խումբ- ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ.

Խրատել ձեզանից փոքրերին (2-3 նախ.) ՝ նշելով ածանցավոր բայերը:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

Կիրառել <<**խորանարդում**>> հնարք ,որն աշակերտներին մղում է պատասխանելու թեմային առնչվող 6 տարբեր հարցերի: :



- Զուգորդի՛ր Գուշակի՛ր
- Համեմատի՛ր Նկարագրի՛ր
- Վերլուծի՛ր Բացահայտի՛ր դասի ուժեղ և թույլ կողմերը

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Աշակերտները կպչուն թերթիկների վրա ներկայացնում են մեկնաբանություններ այն մասին, թե ինչպես են հասկացել կամ յուրացրել դասը:Այն աշակերտները,որ կարծում են,թե դասը լավ են հասկացել կամ յուրացրել,իրենց նավակ-թերթիկները փակցնում են **ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾՈՎԻ** վրա՝գնալով նավարկության:Մեկնաբանությունները տրվում են յուրովի (հիանալի է,լավ եմ հասկացել, ամեն ինչ լավ է, հրաշալի է, ես պատրաստ եմ նավարկության):

Իսկ այն աշակերտները, որոնք վստահ չեն,որ լավ են հասկացել կամ յուրացրել դասը,թերի է մնացել ինչ-որ բան,դեռ կանոններ կան, որ պիտի կրկնեն,իրենց թերթիկները կպցնում են **ԿԱՆՈՆՆԵՐԻ ԾՈՎԱԾՈՅԻ** վրա:

ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ընտրել պոեզիայից նմուշներ և բայերը ենթարկել ձևաբանական վերլուծության: /10-15բայ/

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ կատարվում է **ինքնագնահատման թերթիկի** միջոցով:Աշակերտը յուրաքանչյուր հարցի դիմաց(ընդ.՝10 հարց) գնահատում է ինքն իրեն (1 կամ 0):

- Օգնել եմ պլանավորելու առաջադրանքի կատարումը:
- Օգնել եմ պարզելու և լուծելու հիմնահարցերը:
- Քաջալերել եմ մյուսներին:
- Դիմել եմ փոխզիջման:
- Ուշադիր լսել եմ:
- Մյուսներին ներգրավել եմ քննարկման մեջ :
- Փոխանակել եմ մտքերս:
- Խոսել եմ հասկանալի:
- Քննարկումների ընթացքում եղել եմ խմբի հետ:
- Չեմ շեղվել առաջադրանքը կատարելիս:

Հավելված 2

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ- **10-րդ դասարան**

ԱՌԱՐԿԱՆ՝ հայ գրականություն

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ **Աշոտ Երկաթի կերպարը**

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ հին նյութի հարցման և ամրապնդման դաս

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՝ 45 րոպե

ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ խիկ համակարգ,խմբային հետազոտական մեթոդ,պրիզմա,կերպարի վերլուծության գծագիր

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

- Խորացնել պատմավեպի բովանդակության իմացությունը:
- Զարգացնել գործողությունների զարգացման ընթացքը վերարտադրելու կարողություն-ները:
- Զարգացնել սովորողների համագործակցային, ճանաչողական, հաղորդակցական հմտությունները և կարողությունները:

ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ Սովորողը

- կբացահայտի Աշոտ Երկաթի բնավորության գծերը.
- կընկալի կերպարի հոգեբանական շարժառիթները.
- կմեկնաբանի կերպարի գործողությունները

ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պատճառ և հետևանք
- Զարգացում
- Անհատ և հարաբերություններ

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿՆ ԿԱՊԵՐ-Պատմություն,աշխարհագրություն

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1.Կազմակերպական հարցեր

2.**Խթանման փուլ-**Աշակերտների միջոցով **պրիզմայի** կառուցում<< Գ.Մարզպետունի>> մեկնաբառով:Պրիզման եզրափակել վերջնաբառով :Հանձնարարել աշակերտներին կազմել մեկ նախադասություն ,որն արտահայտի մեկնաբառի և վերջնաբառի տրամաբանական կապը:



Աշակերտները կազմում են տարբեր նախադասություններ,օրինակ՝

«Գ.Մարզպետունի» վեպի հիմնական գաղափարը հայրենասիրությունն է:

Հարցերով անդրադառնալ նախորդ թեմաներին.

- Ո՞վ է Մուրացանը / ծննդավայրը,տոհմանունը/:
- Ո՞ր գրական ուղղության է հարում /սկզբունքը,ներկայացուցիչները/:
- Ո՞րոնք են Մուրացանի պատմագեղարվեստական երկերը:
- Ո՞րոնք են <<Գ.Մարզպետունի>>վեպի պատմական աղբյուրները:
- Թվել <<Գ.Մարզպետունի>>վեպի կերպարները:
- Ինչ կառուցվածք ունի վեպը:Ներկայացնել դեպքերն ըստ մասերի:

Իմաստի ընկալման փուլ –Դասարանը բաժանել համագործակցային 4 խմբերի ,տալ հանձնարարություններ:

1-ին խումբ-Ներկայացնել Աշոտ Երկաթին՝

- որպես պատմական անձ.Դրասխանակերտցին նրա մասին
- վեպի սկզբում `Սեդայի և Սահականույշի հուշերում

2-րդ խումբ-Ինչու՞ է Աշոտ Բագրատունին կոչվում Երկաթ: Ինչու՞ է նա հուսալքվում և մեկուսանում Կաքավաբերդում:Ի՞նչ հաղթական Ճակատամարտ է վարում նա:

3-րդ խումբ-Ո՞վ է Աշոտ Երկաթի սերը: Ինչու՞ է Աշոտ Երկաթը ողբերգական կերպար:Արդարացումները և մեղքի գիտակցումը:

4-րդ խումբ-Ի՞նչ նամակ է գրում Աբաս եղբորը: Աշոտ երկաթի մահը և թաղումը:

Կշռադատման փուլ- Բնութագրել Աշոտ Երկաթին՝ ըստ **կերպարի վերլուծության գծագրի:**

Գծագիրը ներկայացնել խմբերին:1-2 րոպե հետո ներկայացնել այն:

Անդրադարձ –Ի՞նչ սովորեցիք Աշոտ Երկաթի հերոսական և ողբերգական կերպարից:

- Այն, ինչ թույլատրելի է հասարակ մահկանացուներին,արգելված է թագավորին,որովհետև նրան է վստահված երկրի և ժողովրդի բախտը:
- Թագավորը պետք է կարողանա բոլոր պարագաներում վեր կանգնել անձնական նախասիրություններից ու կրքերից:
- Թագավորը պետք է իր անձի բարօրությունը զոհի ընդհանուրի շահին:
- Եթե անհատները իրենց վարքագծով ու արարքներով կարող են ազդել պատմության ընթացքի վրա՝դրական թե բացասական իմաստով,ապա պատմությունն էլ իր հերթին որոշում է անհատների կյանքն ու Ճակատագիրը:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հավելված 3

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան- հայ գրականություն

Դասարանը- XII դ

Դասի թեման- Համո Սահյան

Դասի տիպը- ամփոփման դաս

Դասի տևողությունը- 70 րոպե

Դասի նպատակները՝

- Ամփոփել Համո Սահյանի կյանքի հիմնական դրվագները:
- Ամրապնդել ստեղծագործությունների գաղափարական բովանդակությունը:
- Արժևորել հեղինակի լեզուն և ոճը:
- Սերմանել սեր բանաստեղծությունների,առհասարակ պոեզիայի հանդեպ:
- Զարգացնել գեղարվեստական ճաշակ, պատկերավոր մտածողություն
- , հարստացնել սովորողների բառապաշարը
- Զարգացնել գրական նյութի մասին դատողական և վերլուծական կարծիքներ արտահայտելու կարողություններ:

Դասի վերջնարդյունքները՝ Սովսրսողը կկարողանա

- Ներկայացնել Համո Սահյանի ստեղծագործության ընդհանուր նկարագիրը:
- Ներկայացնել երկերի բովանդակությունը և արծարծված հիմնական գաղափարները:
- Անգիր արտասանել ծրագրային և ընտրովի բանաստեղծություններ:
- Արժևորել գրական երկի բարոյական նշանակությունը:
- **Ուսումնական նյութեր-** համակարգիչ, պաստառներ,դասագրքեր,տետրեր,բնագրեր

Խաչվող հասկացություններ

Անհատներ և հարաբերություններ

Կայունությունև փոփոխություն

Զարգացում

Համաշխարհայնացում

Միջառարկայական կապեր ՝ հայոց լեզու,աշխարհագրություն,երաժշտություն

Օգտագործվող մեթոդներ- ԽԻԿ համակարգ, քառաբաժան,սահիկահանդես,խաչբառ, քառաբաժան

Դասի ընթացքը՝

Խթանում -Մուտքի խոսք Համո Սահյանի բանաստեղծական ինքնության մասին /ուսուցիչ/, որին հաջորդում է «Բարով արագիլ» երգը Ռուբեն Մաթևոսյանի կամ Լեյլա Սարիբեկյանի կատարմամբ:

Իմաստի ընկալում-

1.Ֆրոնտալ հարցեր Համո Սահյանի կյանքի և ստեղծագործությունների վերաբերյալ:

2.Խմբային աշխատանքների ներկայացում /նախօրոք հանձնարարած պաստառներ բանաստեղծությունների հիմքի վրա՝ըստ թեմատիկայի/

3.Կիրառում ենք **«Հեղինակի աթոռ», «Լրագրողներ» մ**եթոդները: Լրագրողները հարց են ուղղում Համո Սահյանին.

-Ո՞րն է Ձեր ստեղծագործությունները հասկանալու բանալին:

-Իմ տողերում ինձ ման եկեք, ես ուրիշ տեղ չկամ:

-Ի՞նչ է մասրենին Ձեզ համար:

-Ինչպե՞ս է ծնվում Համո Սահյանի բանաստեղծությունը:

-Ե՞րբ է ընթերցողը հավատում գրողին:

-Ինչ կասեք Ձեր պատգամ-խնդրանքի մասին «Ձեր անվախճան երթի մեջ ինձ բացակա չդնեք»:

Կշռադատման փուլ

1.Խաչբառ՝«Որոտանի երգիչ»

							Ո	Ր	Ո	Տ	Ա	Ն	Ի	Ե	Ձ	Ե	Ր	Ք	Ի	Ն
							Ս	Ա	Ր	Յ	Ա	Ն								
								Լ	Ո	Ր										
							Ա	Ն	Տ	Ա	Ռ	ՈՒ	Մ							
						Ք	Ա	Ր	Ա	Փ	Ն	Ե	Ր							
					Բ	Ա	Կ	ՈՒ	Ն	Ց										
						Ո	Ձ	Ն	Ի											
							Ե	Ս	Ե	Ն	Ի	Ն								
							Վ	Ա	Ր	Ս	Ա	Փ	Ա	Թ						
						Գ	Ր	Ի	Գ	Ո	Ր	Յ	Ա	Ն						
							Ն	Ա	Ի	Ր	Յ	Ա	Ն							
Ի	Ն	Ձ	Բ	Ա	Ց	Ա	Կ	Ա	Չ	Դ	Ն	Ե	Ք							

2.Քառաբաժան

Ի՞նչ գույներ եք տեսնում Սահյանի պոեզիայում	*Ի՞նչ բույրեր եք զգում Սահյանի պոեզիայում*
Բնությունը Սահյանի պոեզիայում	*Եզեր բանաստեղծությունների բառերով*

Անդրադարձ

Ի՞նչ տվեց Սահյանը ձեզ / ի՞նչ սովորեցիք նրա պոեզիայից /

ԳԱՆՀԱՏՈՒՄ ռուբրիկով